ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 08-ը հունվարի 2019թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների** կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին ***բացառությամբ նեքոհիշյալ դեպքերի.***

«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից 12-րդ և 50-րդ չափաբաժինների մասով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է ներառել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը:

«Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 36-րդ չափաբաժնի մասով ներկայացված՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, մասնակցի կողմից ***«Քսիլոմետազոլին (քսիլոմետազոլինի հիդրոքլորիդ)»*** ապրանքատեսակի ***տեխնիկական բնութագիրը*** դաշտում նշվել է «***Դեղաձևը՝ դեղահատեր Դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը՝) 250մգ, բլիստերում»,*** այնինչ ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի «***Դեղաձևը՝ քթակաթիլներ, դեղաչափը և թողարկման ձևը (փաթեթավորումը՝) 1մգ/մլ, 10մլ պլաստիկե սրվակ***»:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակցին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ***«Եվրոֆարմ», «Ռիխպեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ների*** կողմից ներկայացված շտկումների քննարկման վերջնաժամկետի հաջորդ օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Նազարյան
Գնահատող		Վ. Վահանյան
Գնահատող		Մ. Գալստյան
գնահատող		Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար		Ա. Մաղաքյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ(ԷԱՃ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 11-ը հունվարի 2019թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետի ՊԺԿ Ա. Նազարյան,

գնահատողներ՝

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի պետ, բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյան,

ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության ՆՏԱ բաժանմունքի սպա, բ/ծ մայոր Մ. Գալստյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյան:

Քարտուղար՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. ***«Եվրոֆարմ», «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ների*** կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «Եվրոֆարմ», «Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ների կողմից ներկայացված շտկումների քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

1.1 Քննարկելով **«Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի** կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ **Ռիխտեր Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի** կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը (տեխնիկական բնութագիրը) գնահատել բավարար՝ հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

1.2 Քննարկելով **«Եվրոֆարմ» ՍՊԸ**-ի կողմից սահմանված կարգով, որպես շտկում ներկայացված փաստաթղթերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց **12-րդ չափաբաժնի** մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան, իսկ **50-րդ չափաբաժնի** մասով մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ հետևյալ հիմնավորմամբ. մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի գնահատման փուլում հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն էր արձանագրվել նաև **«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի կողմից** 50-րդ չափաբաժնի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում, որը օրենսդրությամբ սահմանված կարգով շտկելու վերաբերյալ մասնակցին 08.01.2019թ. ուղարկվել էր համապատասխան ծանուցում: Սահմանված ժամկետի ավարտից հետո գնահատող հանձնաժողովի ուսումնասիրությամբ պարզվեց, որ **«Եվրոֆարմ» ՍՊԸ**-ի կողմից 50-րդ չափաբաժնի մասով **Eauction** համակարգում նախատեսված դաշտում շտկված փաստաթղթեր չեն կցվել (դրանք այլ փաստաթղթերի հետ միասին համակարգում կցվել են 12-րդ չափաբաժնի համար նախատեսված դաշտում) և հանձնաժողովը տեխնիկապես գնահատելու հնարավորություն չունի, բացի այդ, այն փաստը, որ մասնակցի կողմից 50-րդ չափաբաժնի դաշտում փաստաթղթեր չեն կցվել, համակարգին հնարավորություն չի տալու տվյալ չափաբաժնի մասով հետագայում մասնակցին պայմանագիր շնորհելու:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, հանձնաժողովը որոշեց 50-րդ չափաբաժնի մասով **«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի** հայտը գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել, միաժամանակ փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել տվյալ չափաբաժնի մասով հաջորդ տեղ զբաղեցնող մասնակցին՝ ***«Լիկվոր» ՓԲԸ-ին:***

Հանձնաժողովը որոշեց **«Եվրոֆարմ» ՍՊԸ-ի** տվյալները, գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով, ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

1.4 Հանձնաժողովը որոշեց՝ հրապարակել նիստի արդյունքները՝ ***«Լիկվոր» ՓԲԸ-ին*** առաջարկել ընթացակարգի 50-րդ չափաբաժնի մասով ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ **մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/6» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ***«Լիկվոր» ՓԲԸ-ի*** կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրհամապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Վ. Վահանյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնահատող	Հ. Ավետիսյան
Հանձնաժողովի քարտուղար	Ա. Մաղաքյան